



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄՈՒՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ

Նոյեմբեր 2003

## Հայաստան և համահայկական

### ՆԱԽԱԳԱՀ ՌՈՔԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՅՑՈ ՌՈՒՄՆԻՍԻԱ

Նոյեմբերի 16-ին Ռումինիայի նախագահ Իոն Իլիեսկուի հրավերով եռօրյա պետական այցով Ռումինիա մեկնեց Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի գլխավորած պատվիրակությունը:

Ռոբերտ Քոչարյանն առանձնագրույց ունեցավ Ռումինիայի նախագահի, հետ, հանդիպումներ՝ վարչապետ Ադրիան Նեստուսեի, սենատի նախագահ Նիկոլաե Վլեռնյուի, ինչպես նաև խորհրդարանի երկու պալատների նախագահների հետ: Երկու նախագահների մասնակցությամբ կայացան ընդլայնված կազմով հայ-ռումինական բանակցություններ, ստորագրվեցին երկու երկրների դիվանագիտական և ծառայողական անձնագիր ունեցողների համար մուտքի արտոնագրի պահանջի վերացման, գյուտերի և ապրանքային նշանների, արդյունաբերական սեփականության պաշտպանության ոլորտում համագործակցության մասին համաձայնագրեր: Տեղի ունեցավ Ռ. Քոչարյանի և Ի. Իլիեսկուի համատեղ ասուլիսը:

Երկու երկրների նախագահները ներկա գտնվեցին հայ-ռումինական գործարար համաժողովին: Նախագահ Քոչարյանին հյուրընկալեց նաև Ռումինիայի ուղղափառ եկեղեցու պատրիարքը: ՀՀ Նախագահը մայրաքաղաք Բուխարեստում ծաղկեպսակ դրեց Անհայտ գինվորի հուշարձանին:

Ռոբերտ Քոչարյանի գլխավորած պատվիրակությունն այցելեց Բուխարեստի Սուրբ Հրեշտակապետաց հայկական եկեղեցի: ՀՀ Նախագահը եկեղեցու տարածքում գտնվող Դուրյան մշակութային տանը հանդիպում ունեցավ համայնքի ներկայացուցիչների հետ:

### ՏԱՅԻՎՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԷՄՈՍԱԻ ՈՎՃՈՆՈՎԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑՈ ՀԱՅԱՍՏԱՆ

Նոյեմբերի 25-ին նախագահ Ռոբերտ Քոչարյանի հրավերով երկօրյա պաշտոնական այցով Հայաստան ժամանեց Տաջիկստանի նախագահ Էմոմալի Ռահմոնովը:

Հայաստանի Հանրապետության Նախագահի նստավայրում կայացավ նախագահներ Ռոբերտ Քոչարյանի և Էմոմալի Ռահմոնովի առանձնագրույցը, ապա՝ ընդլայնված կազմով հանդիպում: Հայաստանի և Տաջիկստանի նախագահները ստորագրեցին համատեղ հայտարարություն: Երկու երկրների կառավարությունների միջև ստորագրվեց փոխգործակցության հինգ համաձայնագիր՝ սեյսմիկ պաշտպանության, բնապահպանության, քաղաքաշինության, գիտության, տեխնիկայի ու տեղեկատվության և գաղտնի տեղեկատվության փոխադարձ պաշտպանության ոլորտներում: Նախագահներ Քոչարյանն ու Ռահմոնովը հանդես եկան համատեղ ասուլիսով:

Պաշտոնական այցի օրերին Տաջիկստանի նախագահը հանդիպումներ ունեցավ ՀՀ Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ: Է. Ռահմոնովն այցելեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ուր նրան հյուրընկալեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը: Տաջիկստանի նախագահը եղավ Մատենադարանում, այցելեց Մեծ եղեռնի հուշահամալիր ու Հայոց ցեղասպանության ինստիտուտ-թանգարան և հուշահամալիրին հարող այգում ծառ տնկեց:

### ՀԱՅԱՍՏԱՆԸ ԴՈՐՁԱՎ ՄԱԿ-Ի ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՄՏԻԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՂԱՄ

Նոյեմբերի 11-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 58-րդ նստաշրջանում կայացան ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի (ECOSOC) ընտրությունները, որի երկու թափուր տեղերի համար իրենց թեկնածություններն էին ներկայացրել Հայաստանը, Բելառուսը, Մոլդովան և Լեհաստանը:

Տնտսոցխորհրդում ընտրվելու համար անհրաժեշտ է ՄԱԿ-ի

անդամ և քվեարկությանը մասնակցող երկրների ծայնների 2/3-ը (120-125 ծայն):

Ընտրությունների նախօրյակին Մոլդովան հանեց իր թեկնածությունը: Մնացած երեք մասնակիցներից առավել շատ ծայններ հավաքեցին Հայաստանը՝ 127 քվե, և Լեհաստանը՝ 123 քվե, երկու տարվա ժամկետով դառնալով Տնտսոցխորհրդի խորհրդի անդամ:

Տնտսոցխորհուրդը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդից հետո համարվում է այդ կազմակերպության ամենաեղինակավոր մարմինը:

### ՌՈՔԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԸ ԲԱՐՁՐ Է ԳՆԱՀԱՏԵԼ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԸՆԴՊՇՎԱԾ ՀԵՏԱՔԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱԿԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՆԿԱՏԱՍԱՐ

Երևան, նոյեմբերի 13. «Մենք մեզ համարում ենք Եվրոպայի մի մասը և փորձում ենք հնարավորինս ակտիվ լինել Եվրասիանտեգրացման գործընթացներում», - նշել է ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը Եվրոպական խորհրդարանի՝ Հայաստանի հարցերով զեկուցող, պատգամավոր Պեր Գարթոնի հետ հանդիպմանը: Նախագահի խոսքով, Հայաստանը չափազանց կարևորում է Եվրամիության հետ հարաբերությունների զարգացումը, և նման յուրաքանչյուր այց նոր խթան է փոխգործակցության ամրապնդման համար:

Ռոբերտ Քոչարյանը բարձր է գնահատել Եվրամիության ընդգծված հետաքրքրությունը Հարավային Կովկասի նկատմամբ, ինչն արտահայտվում է նաև տարածաշրջանի գծով Եվրամիության հատուկ ներկայացուցչի նշանակումով: ՀՀ նախագահի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստան-ԵՄ երկկողմ հարաբերություններին առնչվող հարցեր, մասնավորապես Եվրամիության հետ համագործակցությունն ընդլայնելու խնդիրներ:

ԼՂ հակամարտության կարգավորման կապակցությամբ Ռոբերտ Քոչարյանն ասել է, որ Հայաստանը պատրաստ է շարունակել հարցի կարգավորման բանակցային գործընթացը: Զրուցակիցների կարծիքով, առանց հակամարտությունների կարգավորման անհնարին է տարածաշրջանի ներուժը լիարժեք օգտագործել: Անդրադարձ է եղել նաև տարածաշրջանային համագործակցությանն առնչվող խնդիրների:

### Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ - Վ. ՊՈՒՏԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Նոյեմբերի 30-ին Սանկտ Պետերբուրգում ՀՀ նախագահը հանդիպել է ՌԴ նախագահին և քննարկել հայ-ռուսական հարաբերություններին և տարածաշրջանում վերջին զարգացումներին առնչվող խնդիրներ:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՐՏԱԳՈՐԾԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Բեռլին, նոյեմբերի 12. «Գերմանիայի համար Հայաստանը տարածաշրջանում կարևոր և վստահելի գործընկեր է», հայտարարել է ԳԴՀ արտգործնախարար Յոշկա Ֆիշերը ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանի հետ հանդիպմանը: Կողմերը գոհունակություն են հայտնել երկու երկրների միջև հարաբերությունների զարգացման ընթացքից և քննարկել են դրանց զարգացման հեռանկարները: Նախարար Օսկանյանը հրավիրել է գերմանացի գործընկերոջն այցելել Հայաստան:

Զրույցի ընթացքում ՀՀ և ԳԴՀ արտգործնախարարները նաև անդրադարձել են Հայաստան-Թուրքիա հարաբերություններին, ինչպես նաև հայ-թուրքական սահմանի բացմանն առնչվող հարցերի: Նախարար Օսկանյանը ներկայացրել է Հայաստանի տնտեսական իրավիճակը վերջին շրջանում և զարգացման առկա տեմպերը պահպանելու ՀՀ կառավարության հաստատակամությունը:

Նույն օրը նախարար Օսկանյանը ելույթ է ունեցել «Հարավային Կովկաս. Քաղաքական մարտահրավերներ և զարգացման հեռանկարներ» միջազգային համաժողովում, որը կազմակերպվել է ԳԴՀ Տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության կողմից:

**Բերլին. Նոյեմբերի 12** Արտգործնախարար Վարդան Օսկանյանը Բեռլինում ելույթ է ունեցել «Հարավային Կովկաս. Քաղաքական մարտահրավերներ և զարգացման հեռանկարներ» միջազգային համաժողովում:

Նա նշել է, որ Հայաստանի արտաքին քաղաքականության հավատամքը՝ նոր տարի թևակոխելու և նախագահ Քոչարյանի հնգամյա նոր ժամկետի սկզբի լույսի ներքո տնտեսական զարգացումն է, իսկ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հեռանկարները, կառուցվում են տարածաշրջանի տնտեսական զարգացման շուրջ:

Ըստ Վ. Օսկանյանի, Հայաստանում ապագայի մասին բանավեճերն այժմ կենտրոնանում են հետագա անելիքների վրա, ինչը ազգաբնակչության կենսամակարդակը մինչև 2020 թ. եվրոպականին համարժեք դարձնել է: Նա մասնավորապես նշել է, որ անցած ամիս աշխարհի չորս կողմից հայերը՝ տնտեսագետներ, վերլուծաբաններ, ֆինանսիստներ, ինչպես նաև կառավարության աշխատակիցներ, հավաքվել էին Երևանում, որպեսզի ուսումնասիրեին զանազան սցենարներ, որոնք կարող են ապահովել երկրի երկնիշ կայուն տնտեսական աճը: Վարդան Օսկանյանը շեշտել է, որ Հայաստանը հպարտ է արագընթաց զարգացմամբ, և դրա պահպանման դեպքում կկարողանա մինչև 2020թ. բնակչության համար ստեղծել կայուն և արժանապատիվ կենսաճ: Նա ասել է, որ «Այդ զարգացումը հենվում է ոչ միայն տնտեսական սյուների վրա: Նման շարունակական և խորաթափանց ծավալումը պահանջում է նորացված կենտրոնացում կրթության, սոցիալական և բարոյական արժեքների վրա: Այն նաև պահանջում է, որպեսզի ժողովրդավարական գործընթացները խորապես արմատավորվեն մեր ամենօրյա կյանքում և զարգանան տնտեսությանը զուգահեռ: Եվ կայուն, էական տնտեսական զարգացումը մեզ համար նշանակում է արտահանման վրա հիմնված տնտեսություն, մուտք այլ շուկաներ, տնտեսության էլ ավելի ազատականացում, ենթակառուցվածքների մեջ կատարվող ներդրումների մեծ ծավալ, համեմատաբար ոչ թանկ, բայց որակյալ աշխատուժ և մասնավոր սեկտորին հատկացվող առաջատար դերակատարում»:

«Հարտգործնախարարի համոզմամբ, տարածաշրջանի երեք երկրներից յուրաքանչյուրից պահանջվում է որդեգրել ողջախոհ համընդգրկուն տնտեսական, սոցիալական և քաղաքական վարքագիծ, որը կապահովի արժանապատիվ կյանք իրենց ժողովուրդների համար: Այդ ճանապարհն այդ երկրները կարող են անցնել միայնակ, կամ՝ միասին: Եթե նրանք սկսեն խոչընդոտներ ստեղծել մեկը մյուսի ճանապարհին, դա համազոր կլինի ինքնապայանության: Այդ գործում Վ. Օսկանյանը հատուկ կարևորել է Եվրոպայի դերը, քանի որ Եվրոպայում տարածաշրջանային համագործակցության, առձակատումների, փոխափոխումների վերջին 50 տարիների հաջողությունների փորձը կարող է օրինակ եւ ուղեցույց ծառայել մեզ համար:

Վարդան Օսկանյանն անդրադարձել է նաև փակ սահմանների խնդրին և ասել, որ Թուրքիան պետք է գտնի այդ խնդրի լուծումը քանի որ Եվրոպական կառույցները քննարկում են այդ երկրի ինտեգրումը Եվրոպայի կազմում: Նա նշել է, որ սահմանների շարունակաբար փակ լինելը նվազեցնում է տարածաշրջանում դրական և աշխույժ դերակատարում ունենալու Թուրքիայի ձգտման հիմնավորվածությունը:

«Հարտգործնախարարը նշել է, որ հայերը և ադրբեջանցիները պետք է համագործակցեն, քանի որ «մենք չունենք այլընտրանք: Հայերն ու ադրբեջանցիները պետք է առաջ ընթանան: Ինչ որ տեղում, ինչ որ ժամանակ մենք պետք է մեր տարբերությունների ու անցյալի սահմանագիծ անցկացնենք և շարժվենք դեպի մեր ընդհանուր ապագան:» Նա կրկին անգամ շեշտել է, որ «Լեռնային Ղարաբաղի բնակչությունը միշտ եղել է և այսօր էլ շարունակում է լինել հայկական: Լեզվական, կրոնական եւ մշակութային առումներով Լեռնային Ղարաբաղի

բնակչությունը հայկական է: Իրավական և պատմական առումներով Լեռնային Ղարաբաղը հայկական է եղել դարեր շարունակ: Խորհրդային Միության փլուզման պահին օրենքի շրջանակներում այն օգտվեց ինքնորոշման իր օրինական իրավունքից և կանխորոշեց իր հայկական ապագան: Վերջին մեկուկես տասնամյակի ընթացքում այն եղել է իր սեփական ձակատագրի տերը: Խորհրդային Ադրբեջանի պարտադրված գերիշխանության 75 տարիներից բացի, Լեռնային Ղարաբաղը երբևէ չի եղել ստոցիացված Ադրբեջանի հետ: Ուստի իրատեսական չեն այն ակնկալիքները, որ հայերը Լեռնային Ղարաբաղը կհանձնեն Ադրբեջանի իշխանությանը, այն պարագայում, երբ այն երբեք չի պատկանել Ադրբեջանին ո՛չ պատմական, ո՛չ էլ իրավական առումներով: Այն ակնկալիքը, որ հայերն Ադրբեջանի հարեւանությամբ կսպրեն խաղաղ, առանց ռազմական բուժերային գոտու, լիովին իրատեսական և հետապնդման արժանի նպատակ է:»

**ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԱՏԵՂԾՄԱՆ  
ՀԻՄՔԸ՝ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆ-  
ՍՓՅՈՒՌԶ ԱՈՒԱԶԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ**

**Նոյեմբերի 14-16-ը Ծաղկածորում** անցկացված Տեղեկատվության միջոցների ներկայացուցիչների Հայաստան-Սփյուռք առաջին համաժողովը, մասնակիցների գնահատմամբ, լուրջ և կարելի քայլ էր համահայկական տեղեկատվական դաշտի և համահայկական լրատվական ակումբի ստեղծման ուղղությամբ: Համաժողովի բանախոսները համոզված էին, որ նման ծառայության ստեղծումը աշխարհի բոլոր ծայրերում գործող հայկական լրատվամիջոցների համար կապահովի հավաքական տեղեկատվություն համազգային առաջնահերթությունների մասին, և յուրաքանչյուրն իրեն կզգա ընդհանրության մի մասնիկ:

Համաժողովին մասնակցեցին ամբողջ աշխարհի 160 առաջատար հայկական լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Համաժողովում ընթացած քննարկումներին ընդգծվեց, որ չնայած աշխարհի տարբեր երկրներում գործող լրատվամիջոցների խնդիրների, նպատակների, մոտեցումների և կեցվածքների տարբերությանը, այնուամենայնիվ բոլորի համար ընդհանուր են ազգապահպանման, մշակութային, կրթական և այլ խնդիրներ: Դրանց լուծմանը նպաստելու համար մասնակիցների կողմից եղան ամենատարբեր առաջարկներ:

Համաժողովի արդյունքում որոշվեց տեղեկատվության փոխանակման, կանոնակարգման կառույցի գործունեության ձևի, ֆինանսավորման և այլ կազմակերպչական հարցերի շուրջ օնլայն քննարկումներ անցկացնել մինչև երկրորդ համաժողովը, որ նախատեսվում է անցկացնել գալիք տարի: Մինչ այդ կստեղծվի նաև հայկական լրատվամիջոցների տեղեկատվական բանկ, որը պարբերաբար կթարմացվի: Աշխատանքային խումբը կաշխատի համահայկական լրատվական դաշտի կայացման վերաբերյալ օնլայն ստացված առաջարկությունների, գաղափարների մշակման ուղղությամբ, որոնք քվեարկության կդրվեն երկրորդ համաժողովում:

**ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ Է «ՄԵՏԱՔՍԻ ԶԱՆԱՊՈՐՀ»  
ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՆ**

Հայաստանը, որպես Համաշխարհային զբոսաշրջության կազմակերպության անդամ, մասնակցում է այդ կազմակերպության՝ «Մետաքսի ճանապարհ» ծրագրին, որի նպատակն է վաղ դարերից հայտնի այդ ճանապարհի վերածնունդը և ակտիվացումը: Ծրագրի շրջանակներում Մետաքսի ճանապարհին հարող տարածքներում կազմակերպվում են ճանաչողական, էկոտուրիստական, պատմա-մշակութային տուրեր, որոնք ընդգրկում են տարածաշրջանի մի քանի երկրներ: Հայաստանի հիմնական գործընկեր-պետություններն են Իրանը և Վրաստանը: Հայաստանի մասնակցությունը ծրագրին առաջիկայում կակտիվանա, քանի որ տուրերում կընդգրկվի նաև Մետաքսի

Ճանապարհի ամենահայտնի մասերից մեկը՝ Սելիմի լեռնանցքը, որը վերջերս վերանորոգվեց «Լինսի» հիմնադրամի միջոցներով: Սելիմի լեռնանցքի ներգրավումը ծրագրում կբերի նաև այդ շրջանում գյուղատնտեսության, առևտրի և սպասարկման ոլորտի զարգացման:

Ներկայումս ծրագրին մասնակցում են 19 պետություններ, քննարկման փուլում է ևս 5 պետությունների՝ այդ թվում ՌԴ, մասնակցության հարցը:

### «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՇՈՒՄՏԱՄԱՐԱԹՈՆԸ

Նոյեմբերի 28-ին Լոս Անջելեսում անցկացվեց Լեռնային Ղարաբաղի ողնաշարի՝ Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու շինարարության ֆինանսավորման նպատակով հերթական մարաթոնի ավարտական փուլը: Մարաթոնի ժամանակ, որին մասնակցեցին հայեր աշխարհի տարբեր անկյուններից, հավաքվեց ավելի քան 6,7 մլն ԱՄՆ դոլար, ինչը հնարավորություն կտա կառուցելու մայրուղու ևս 40կմ-անոց մի հատված: Մայրուղու ընդհանուր երկարությունը 170կմ է, որից առ այսօր կառուցված է 44կմ-ը, 26կմ-ն էլ այժմ կառուցվում է: Մարաթոնին ակտիվորեն մասնակցեցին նաև Հայաստանի և ԼՂ բնակիչները, նվիրաբերելով համապատասխանաբար 620,000 և 84,000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար:

### ՀԱՍՏԱՅՎԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Երևան, նոյեմբերի 11: «Ազգային գրականությանը՝ ազգային պաշտպանություն» խորագիրն էր կրում ժամը 22:00-24:00-ը Հայաստանի Հանրային հեռուստատեսությամբ հեռարձակված հեռուստամարաթոնը, որ նվիրված էր նորաստեղծ Համահայկական գրական հիմնադրամի համար միջոցների հանգանակությանը:

Նախնական տվյալներով հավաքվել է մոտ 200 հազար դոլար: «Անպատմելի մեծ ակտիվություն էր, Գրողների միության հեռախոսները բառացիորեն վառվում էին ամբողջ եթերի ընթացքում: Սա հայ գրականության հաղթանակն էր: Այն քանից հայ գրողի ել ընթերցողի միջև ջրբաժանը», - ասաց ՀՀ Գրողների Միության նախագահ Լեւոն Անանյանը:

Հիմնադրամի մայր գումարը՝ 100 հազար դոլար, նվիրաբերեց Համաշխարհային հայկական կազմակերպության և Ռուսաստանի Հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը: Այդ գումարը նախատեսվում է թողնել անձեռնմխելի: ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արթուր Բաղդասարյանը ԱԺ նախագահի ֆոնդից հիմնադրամին հատկացրեց 1 միլիոն դրամ (մոտ 1750 ԱՄՆ դոլար), ՀՀ վարչապետ, Հայաստանի Հանրապետական կուսակցության խորհրդի նախագահ Անդրանիկ Մարգարյանը կուսակցության միջոցներից տրամադրեց 3 միլիոն դրամ: Նվիրատվություններ կատարեցին նաև գործարարներ, մտավորականներ, մշակույթի գործիչներ, հասարակական կազմակերպությունների և տարբեր միությունների ներկայացուցիչներ, թոշակառուներ, ուսանողներ, նույնիսկ դպրոցականներ:

Նվիրատվություններ են կատարվել Սփյուռքից: Մասնավորապես, Ուկրաինահայերի միությունը նվիրաբերել է 10 հազար դոլար, վիրահայերի «Աստված սեր է» հոգեւոր կազմակերպությունը՝ 10 հազար դոլար: 5-հազարական դոլար են նվիրաբերել Հայ օգնության միությունը, սփյուռքահայ բարերար Վահագն Հովնանյանը:

«Մուլտի գրուպ» կոնցերնի նախագահ Գագիկ Ծառուկյանը հիմնադրամին է նվիրաբերել 5 մլն դրամ, «Միկա լիմիտեդ» ընկերությունը՝ 5 հազար դոլար, «Գրանդ Քենդի» ընկերությունը՝ 3 հազար դոլար:

Հայաստանի Գրական հիմնադրամի նախագահ, Գրողների միության անդամ Նելլի Շահնազարյանը հայտնել է, որ արդյունքներն ամփոփելուց հետո Գրողների միությունը հանդես կգա հայտարարությամբ, թե որքան նվիրատվություն է կատարվել հեռուստամարաթոնի ընթացքում, իսկ բոլոր նվիրատուների անունները կիրապարակվեն մանուկում:

Նոյեմբերի 12-ին Հայաստանում. Շիրակի մարզում աղետի ենթարկվեց Հայաստանում ռուսական ռազմակայանի «ՄԻԳ - 29» կործանիչը: Աղետի պատճառը վատ տեսանելիությունն էր, ինչի հետևանքով ինքնաթիռը բախվել է լեռանը և ընկել 2431մ բարձրության վրա: Զոհվել է 39-ամյա օդաչու Կոնստանտին Կարդաշը:

Նոյեմբերի 15-ին Ստամբուլի Բերա թաղամասում տեղի ունեցած պայթյուններից, որոնց թիրախները Մեծ Բրիտանիայի հյուպատոսությունն ու HSBC բանկի Ստամբուլի կենտրոնակայանն էին, տուժեցին նաև հայկական «Մարմարա» և «Ժամանակ» թերթերի խմբագրատներն ու տպարանները, «Սուրբ Երրորդություն» հայկական եկեղեցին և հայերին պատկանող մի շարք խանութներ և այլ գործատեղեր:

Նոյեմբերի 17-ին Սուդանում տեղի ունեցավ «ԱՆ-12» օդանավի աղետ, ինչից զոհվեցին անձնակազմի՝ պայմանագրով աշխատող չորս հայ անդամները: Չի բացառվում ահաբեկչության վարկածը:

Նոյեմբերին Երևանում ավարտվեցին աղմկահարույց երկու դատավարություններ: Հանրային հեռուստաընկերության նախագահ Տիգրան Նաղդալյանի սպանության պատվիրատուն և հիմնական կատարողը դատապարտվեցին 15 տարվա, մի հոգի՝ 12, ևս մեկը՝ 11 տարվա ազատազրկման: Հոկտեմբերի 27-ի ոճրագործության մեղավորների մի քանի տարի տևած դատավարությունն ավարտվեց նոյեմբերին, սակայն դատավճիռները հնչեցին դեկտեմբերի 2-ին: Մեկ հոգուց բացի, բոլորը դատապարտվեցին ցմահ ազատազրկման:

Նոյեմբերի 24-ին Երևանում, Ազգային պատկերասրահի շենքում հանդիսավորությամբ նշվեց Հայաստանի ազգային արժույթի՝ դրամի ներմուծման տաս տարին: Հանդիսությանը, որի կապակցությամբ կազմակերպվել էր դրամին նվիրված փոքրիկ ցուցահանդես և մասնակցում էին կառավարության, բանկային համակարգի, գործարար շրջանների բազմաթիվ ներկայացուցիչներ, լրագրողներ, ներկա էր նաև Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը:

Նոյեմբերի 26-ին Մոսկվայում հանդիպեցին Ռուսաստանի և Հարավային Կովկասի հոգևոր առաջնորդները՝ քննարկելու տարածաշրջանում առկա խնդիրները և դրանց լուծման հնարավոր եղանակները: **Ամենայն Հայոց Կաթողիկոս ՆՍՕՏՏ Գարեգին Բ-ին**, Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի Երկրորդին, Համայն Վրաստանի պատրիարք Իլյա Երկրորդին և Կովկասի մուսուլմանների առաջնորդ Ալլահշաքյուր Փաշազադեին ընդունեց նաև Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը:

### Միացյալ Թագավորություն

Նոյեմբերի 3-ին Լոնդոնում ՀՀ դեսպան Վահե Գաբրիելյանն ընդունեց Աշֆիլդի տեղական ինքնակառավարման խորհրդի նախագահին և խորհրդի երկու անդամների՝ քննարկելու այդ շրջանի քաղաքների և ՀՀ քաղաքների միջև քույրացման ծրագրեր իրականացնելու հնարավորությունը:

Նոյեմբերի երկրորդ շաբաթվա ընթացքում մասնավոր այցով Լոնդոն այցելեց Ամենայն Հայոց կաթողիկոս, ՆՍՕՏՏ Գարեգին Բ պատրիարքը, որը հանդիպումներ ունեցավ հայկական մի քանի կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, այցելեց Լոնդոնում ՀՀ դեսպանություն:

Նոյեմբերի 24-ին Երևանում. Լոնդոնում ՀՀ դեսպանության նախաձեռնությամբ առաջին անգամ անցկացվեցին քաղաքական խորհրդակցություններ ՀՀ արտգործնախարարության և Միացյալ Թագավորության ֆորին օֆիսի և պաշտպանության նախարարությունների ներկայացուցիչների միջև: Խորհրդակցություններին մասնակցելու նպատակով Երևան մեկնեց Լոնդոնում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վահե Գաբրիելյանը: